Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. սեպտեմբերի 7-10-ը Ռումինիա գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը

Արթուր Նալբանդյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ Լոռու մարզպետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հարգիտա նահանգ, Ռումինիա, 2017թ. սեպտեմբերի 7-10-ը:

4. Հրավիրող կողմը

Ռումինիայի Հարգիտայի նահանգային խորհրդի նախագահ Բորբոյ Զաբան

5. Գործուղման նպատակը

ՀՀ Լոռու մարզի և Ռումինիայի Հարգիտա նահանգի միջև հնարավոր համագործակցություն սկսել տնտեսության տարբեր բնագավառներում

6. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը

Սեպտեմբերի 8-ին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը հանդիպել է Հարգիտայի պրեֆեկտ Ժան-Ադրիան Անդրեյի հետ, ով պատրաստակամություն է հայտնել երկու մարզերի համագործակցության հարցում:

Մարզի պատվիրակությունը սեպտեմբերի 8-ին, 9-ին և 10-ին Հարգիտայի գործարար շրջանակների հետ հանդիպումներ է ունեցել նահանգի վարչական կենտրոն Միերկուրեա-Չուկում, Օդորհեյու-Սեկույեսկ քաղաքում և Գեորգենում, որին ընդհանուր հաշվով մասնակցում էին 58 տեղական ընկերությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչներ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են Հայաստանի, մասնավորապես Լոռու մարզի և Ալավերդի քաղաքի տնտեսական գրավչության մասին: Այցի ընթացքում այցելություններ են իրականացվել ոլորտային տարբեր ձեռնարկություններ՝ Միերկուրեա-Չուկի CSIKI SOR/Չիկի Սոր գարեջրի գործարան, AmigoIntercost ալկոհոլային խմիչքների գործարան, Ֆրումոասայի/Frumoasa Պանրի կոոպերատիվ, Օդորհեյու Սեկույեսկի/Odorheiu Secuiesc ձեռնարկությունների ինկուբատոր կենտրոն և տեղի փայտամշակման կոմբինատ:

Հարգիտայի Առևտրաարդյունաբերական պալատի նախագահը պատրաստակամություն է հայտնել հաջորդ գարնանը գործարարների պատվիրակությամբ այցելել Լոռու մարզ՝ տեղում գործարարների հետ համագործակցության կապեր հաստատելու համար:

Պատվիրակությունն այցելել է Գեորգենի Բաթյանի Իգնաց տեխնիկական ավագ դպրոց, որտեղ տնօրենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Ալավերդու կրթական հաստատություններից մեկի հետ համագործակցության մասին:

Հայկական պատվիրակությունն այցելեց նաև Լակու Ռոշու տուրիստական վայր: Պատվիրակությունը մասնակցել է նաև Գեորգենի Հայկական Արվեստի փառատոնին:

Հայկական օրերի առանցքային միջոցառումներից էր Հայ կաթոլիկ եկեղեցու մերձակա տարածքում Հայկական խաչքարի տեղադրումը՝ ի հիշատակ Գեորգենում հայերի հաստատման 380-ամյակի, որի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել է նաև հայկական պատվիրակությունը:

7. Այցի ընթացքում ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում ստորագրվել է ՀՀ Լոռու մարզի և Ռումինիայի Հարգիտա նահանգի միջև համագործակցության վերաբերյալ մտադրությունների արձանագրություն, պաշտոնական արարողությունը խորհրդանշական ձևով տեղի է ունեցել Ալավերդու հետ եղբայրացած Գեորգենի Հայ համայնքի նորաբաց տանը, որտեղ հայկական պատվիրակությանն ընդունեց նահանգային խորհրդի նախագահ Բորբոյ Չաբան:

8. Ձեռք բերված պայմանավորվածություններ

Այցի ընթացքում Լոռու մարզպետի և նահանգապետ Բորբոյ Չաբայի միջև տեղի է ունեցել առանձնազրույց, որի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել մի շարք գործնական հարցերի և անելիքների շուրջ: Մասնավորապես, նահանգապետ Բորբոյ Չաբան, իմանալով առաջիկայում՝ ս/թ նոյեմբերին ստորագրվելիք ԵՄ-Հայաստան խորացված համագործակցության համաձայնագրի մասին, պատրաստակամություն է հայտնել ԵՄ շրջանակներում Լոռու մարզի հետ կոնկրետ ծրագրեր իրականացնելու հարցում:

Սեպտեմբերի 8-ին Գեորգենի քաղաքապետարանում կայացել է քաղաքապետների մակարդակով հանդիպում մարզի պատվիրակության, դեսպան Գասպարյանի մասնակցությամբ, որի ընթացքում Ալավերդու քաղաքապետ Կ.Փարեմուզյանն իր ռումինական գործընկեր Զոլտան Նագիի հետ քննարկել են հետագա համագործակցության հարցերը:

9. Գործուղվողը՝

Արթուր Նալբանդյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

13.09.2017թ.